ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի հոկտեմբերի 7-ի № 70-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի № 127-Լ
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում չհանդիսացող՝ Հաշվեքննիչ պալատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնների նշանակման պայմանները և Հաշվեքննիչ պալատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումում պաշտոնի նշանակման համար աուդիտորի որակավորման քննությունների ծրագրի առարկաները սահմանելու մասին» № 127-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետի 1-ին ենթակետում «պաշտոն,» բառից հետո լրացնել «կամ ունի միջազգային խմբի անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունում աուդիտորի առնվազն չորս տարվա ստաժ կամ այլ աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորի առնվազն յոթ տարվա ստաժ,» բառերը,

2) 1-ին կետի 2-րդ ենթակետում «որակավորում,» բառից հետո լրացնել «կամ հանձնել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) համարժեք քննությունները» բառերը, «երկու» և «գլխավոր» բառերը համապատասխանաբար փոխարինել «երեք» և «առաջատար» բառերով, իսկ «պաշտոն,» բառից հետո լրացնել «կամ ունի միջազգային խմբի անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունում աուդիտորի առնվազն երկու տարվա ստաժ կամ այլ աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորի առնվազն հինգ տարվա ստաժ,» բառերը,

3) 1-ին կետի 3-րդ ենթակետում «նշանակումը» բառից հետո լրացնել «երկու տարի» բառերը, իսկ «երկու» և «չորս» բառերը համապատասխանաբար փոխարինել «երեք» և «երեք» բառերով,

4) 1-ին կետի 4-րդ ենթակետում «կամ ունի միջազգային խմբի անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունում աուդիտորի առնվազն երկու տարվա ստաժ» բառերը հանել, իսկ «երեք» բառը փոխարինել «երկու» բառով,

5) 1-ին կետի 9-րդ ենթակետում «որակավորված» բառը հանել, իսկ «ստաժ,» բառից հետո լրացնել «կամ մինչև նշանակումն առնվազն երեք տարի զբաղեցրել է Հաշվեքննիչ պալատում ծառայության գլխավոր խմբի պաշտոն,» բառերը,

6) 1-ին կետի 10-րդ ենթակետում «1-ին, 2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ» բառերով, «որակավորված» բառը հանել, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «կամ մինչև նշանակումն առնվազն երեք տարի զբաղեցրել է Հաշվեքննիչ պալատում ծառայության առաջատար խմբի պաշտոն,» բառերը,

7) 1-ին կետի 11-րդ ենթակետում «որակավորված» բառը հանել, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «կամ մինչև նշանակումն առնվազն երկու տարի զբաղեցրել է Հաշվեքննիչ պալատում ծառայության առաջատար խմբի պաշտոն,» բառերը,

8) 1-ին կետի 12-րդ ենթակետում «որակավորված» բառը հանել, «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «կամ մինչև նշանակումն առնվազն երկու տարի զբաղեցրել է Հաշվեքննիչ պալատում ծառայության կրտսեր խմբի պաշտոն,» բառերը:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

14/10/2025

X

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Signed by: ARUSTAMYAN KAREN 3814790103

/Ա. ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ